

**Անդրանիկ Ծառուկյանի կենսապատումը բանաստեղծության ու  
հրապարակախոսության համապատկերում**

*Նաիրա Համբարձումյան*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.2-69>

*Հանգուցային բառեր. Անդրանիկ Ծառուկյան, սփյուռքահայ գրականություն, բանաստեղծ, արձակագիր, հրապարակագրություն, «Թուղթ առ Երևան» պոեմ*

**Ներածություն**

19-րդ դարավերջին, երբ հայ գրականության մեջ սկզբնավորվեց հայկական կոտորածների թեման, արևմտահայ գրողները (այդ թվում՝ Ջապել Եսայանը) իրենց ստեղծագործությունների առանցքը դարձրին 1890-1900-ական թվականներին և դրանից հետո օսմանյան կայսրության տարբեր քաղաքներում տեղի ունեցող հայկական ջարդերի պատկերումները՝ մեկնաբանելով դրանք ազգային-ազատագրական շարժման ու պայքարի համատիրություն: 20-րդ դարի 20-30-ական թվականներին և հետագա տասնամյակներին գրվեցին բազմաթիվ երկեր 1915 թվականի ցեղասպանության սարսափների առիթով: Ընդհանրականորեն քննելով եղեռնապատումի գրականությունը՝ հնարավոր է առանձնացնել գլխավոր ուղղությունները՝

ա. *Նահանջի գրականությունը*, որ պատկերում էր սփյուռքահայության կյանքը, նրա սոցիալական վիճակը և հատկապես ուժացման, նահանջի տագնապները (Շահան Շահնուր, Ջարեհ Որբունի, Հրաչ Ջարդարյան և ուրիշներ):

բ. *Գարոտի գրականությունը*, այդ թվում արևմտահայ գավառական գրականությունից սկզբնավորված *գյուղագրությունը*, որ նախատեղեռնյան գյուղի վերակենդանացումն էր (Համաստեղ, Հակոբ Մնձուրի, Վազգեն Շուշանյան, Վահե Հայկ, Բենիամին Նուրիկյան, այլք) և միաժամանակ կարոտի գրականության արտահայտություն:

Գրականությունը իրադարձական հայելի է, որում անդրադարձվում են բոլոր ժամանակների պատմական կարևոր իրադարձությունները: Այս առումով եղեռնապատումի գրականության մեջ առանձին տեղ են գրավում ինքնակենսագրական երկերը, որոնք, բացի գեղարվեստական արժեքից, ունեն նաև փաստական նշանակություն և ուշագրավ են ցեղասպանության պատմության, գրականագիտության, փիլիսոփայության, հոգեբանության և հոգեվերլուծության ուսումնասիրությունների տեսանկյուններից: Հետցեղասպանության շրջանի հեղինակները՝ Ջապել Եսայանը, Վահան Թոթովենցը, Գուրգեն Մահարին, Վազգեն Շուշանյանը, Լևոն-Ջավեն Սյուրմեյանը, Արամ Հայկազը, Մուշեղ Իշխանը, Անդրանիկ Անդրեասյանը, Խաչիկ Դաշտենցը և ուրիշներ, գեղարվեստականացրին իրենց *ցեղասպանական* կամ *հետցեղասպանական* փորձառությունը, ստեղծեցին երկեր, որոնք մշտապես ընթերցողների ուշադրության կենտրոնում են:

Ուշագրավ է գրականագետ Վազգեն Գաբրիելյանի նկատումը. «Սփյուռքահայ գրականության պատմության բոլոր շրջաններում էլ նախատեղեռնյան օրերի,

ապա եղեռնի, աքսորի ու որբանոցային կյանքի պատկերներն արձակի կենտրոնական թեմաներից են եղել: Եվ ահա հետպատերազմյան տարիներին ու հատկապես 20-րդ դարի 60-70-ական թվականներին այդ, այսպես կոչված, անցյալի թեման գեղարվեստական հետաքրքիր մարմնավորումներ է ստանում ինչպես արդեն հիշված հեղինակների (Համաստեղ, Շ. Մնձուրի, Ա. Հայկազ, Ա. Ծառուկյան և ուրիշներ), այնպես էլ Մ. Մանվելյանի, Ս. Սիմոնյանի, Ա. Մարկոսյանի, Տ. Վարժապետյանի, Ա. Դարյանի և ուրիշների գործերում» [1, 287]:

Բազմաթիվ են այն գրողները, որոնք ինքնակենսագրական երկերի միջոցով պատկերել են իրենց որբանոցային կյանքը: Նրանց ստեղծած գրականությունը, եթե նույնիսկ անմիջականորեն չի պատկերում 1915 թվականի դեպքերը, ապա դրա ազդեցությունը և հետևանքները կրում է անուղակիորեն՝ հատկանշելով որբացած սերնդի գոյապայքարը հետեղեռնյան Սփյուռքի տարբեր գաղթօջախներում: Այդ հեղինակներից է սփյուռքահայ բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս Անդրանիկ Ծառուկյանը:

### **Կենսապատումը**

Անդրանիկ Թորոսի Ծառուկյանը ծնվել է 1913 թվականի հոկտեմբերի 4-ին Թուրքիայի Սիվասի (Մեքաստիա) մարզի Կյուրին (Գյուրուն) գյուղաքաղաքում<sup>4</sup>:

1915 թվականին Հայոց ցեղասպանության հետևանքով գրկվել է հորից և միացել է կյանքի դժվարությունները կրող այն բազմաթիվ որբ հայ մանուկների հետագա ճակատագրին, որոնց մասին լռում է թուրքական պատմագրությունը: Ֆիզիկական ոչնչացումից փրկված այդ երեխաների կյանքը ուղեկցվել է բռնությամբ, չքավորությամբ ու անգործությամբ:

Ծառուկյանը ծնունդով Մեքաստիայի մարզից էր. նա ցեղասպանության ժամանակ մենակ է մնացել է մոր՝ Երանուհու հետ: Սիրիայի Դեր Զորանապատի երկար ճանապարհին անցնելուց հետո մայրը և որդին հասել են սիրիական Հումս և, սեքաստացի այլ հայերի հետ գտնելով կիսախարխուլ մի տուն՝ տեղավորվել են այնտեղ: Նյութական ծանր պայմանների պատճառով, սակայն, մայրը երեխային, երբ նա հինգ տարեկան էր,



<sup>4</sup> Որոշ աղբյուրներում Անդրանիկ Ծառուկյանի ծննդյան տարեթիվը նշվում է 1912 թվականը: Ծառուկյանի կենսագիրներից Թորոս Թորանյանը, չնշելով գրողի ծննդյան տարեթիվը, գրում է, թե իր առաջին «Եղբարբախտ քերթողներ» (1933) գիրքը գրելիս հեղինակը 20 տարեկան էր [5]: Կենսագրական այս փաստը հիմք է՝ կարծելու, թե հնարավոր է նաև տարեգրության սխալ, ինչը Օսմանյան կայսրության սահմաններում բացառելի հանգամանք չէր: Հետևաբար՝ վիպակի գրության տարեթիվը պայմանականորեն նշում ենք 1952-53 թվականները, հաշվի առնելով հանգամանքը, թե որ թվականին է ծնվել հեղինակը (1912, թե՛ 1913): Անդրանիկ Ծառուկյանը *որբանոցային* գրողների սերնդից է [16, 253-294]:

հանձնել է մանկատուն: 1918-1922 թվականները Ծառուկյանը անցկացրել է Հալեպի որբանոցում:

Տարիներ անց մայրը վերցրել է որդուն մանկատանից, սակայն այդ ժամանակահատվածը վճռորոշ դերակատարություն է ունեցել Ծառուկյանի հայացքների ձևավորման գործում և հետագայում դարձել է «Մանկություն չունեցող մարդիկ» և «Երագային Հալեպը» կենսապատմամբ ստեղծելու հիմք. «Մենք մանկություն չունեցանք, որովհետև հայ էինք ու որբ: Յրտին ու անձրևին մեր ոտաբոբիկ, մերկ ու խեղճ գոյությունը մանկություն էր արդյոք: Զրկանքն էր, սո՛վը, արցունքն էր, օտարականների անտարբերությունն ու անխղճությունն էր մանկությունը» [6, 9]:

1928 թվականին Անդրանիկ Ծառուկյանը ավարտել է Հալեպի «Հայկազյան» ազգային վարժարանը: 1930-1934 թվականներին սովորել է Բեյրութի «Համազգայինի» ճեմարանում, սակայն վկայական չի ստացել: 1935-1942 թվականներին դասավանդել է Հալեպի «Զավարյան» վարժարանում: Հեղինակի առաջին՝ «Եղերաբախտ քերթողներ» երկի հերոսները Պետրոս Դուրյանը, Միսաք Մեծարենցը, Վահան Տերյանը, Մատթեոս Զարիֆյանն են:

Անդրանիկ Ծառուկյանի մանկությունը և պատանեկությունը անցել է Հալեպում, երիտասարդությունը՝ Բեյրութում:

### **Խմբագրական գործունեությունը և հրապարակագրությունը**

Ծառուկյանը տասնամյակներ ապրեց ու ստեղծագործեց Բեյրութում, որը հայ ազգային կուսակցությունների կենտրոնական մարմինների նստավայրն էր: Կուսակցական այդ կազմակերպությունների տնօրինության տակ հրատարակվում էին «Ազդակ», «Զարթոնք», «Արարատ» օրաթերթերը, «Բագին», «Շիրակ», «Արարատ-գրական» հանդեսները, ինչպես նաև «Մեր նշանաբանն է՝ Յառաջ», «Կանչ», «Ազգային մշակույթ», «Յառաջ-գրական», «Անի», «Ազդակ շաբաթօրյակ» ևն հավելվածները: Ըստ հայտնի մատենագետ Ժիրայր Դանիելյանի՝ 1960-ական թվականներին Բեյրութում միաժամանակ տպագրվել են մոտավորապես հիսուն հայկական պարբերաթերթեր [3, 253-294]:

Մի որոշ ժամանակ Ծառուկյանը խմբագրել է Բեյրութի «Ազդակ» օրաթերթը: Այնուհետև վերադարձել է Հալեպ: Սակայն նա իրեն միայն օրաթերթի շրջանակներում սպառող մարդ չէր: Այս առիթով գրականագետ Թորոս Թորանյանը գրում է. «Ծառուկյանի ժառանգության հարուստ մասերից է հրապարակագրությունը: Եթե մի օր հաշվեին, որ «Նայիրի»-ի հավաքածուն 500-ից ավելի սովորածավալ հատոր է, ապահովաբար հարյուրից ավելին Ծառուկյանի գրչի արգասիք է: Իր բեղունությամբ նա կարող է մրցել Արփիար Արփիարյանի, Երվանդ Օտյանի, Արշակ Չոպանյանի հետ» [5, 3-4]:

1941 թվականին Ծառուկյանը Հալեպում հիմնադրել է «Նայիրի» պարբերականը, որպեսզի հնարավորություն ունենար ազատ մարդու ազատ խոսքը հնչեցնել հանուն ճշմարտության:

Պարբերաթերթը կանոնավոր հրատարակվել է 1946 թվականից: Այնուհետև, Ծառուկյան-խմբագիրը տեղափոխվել է Բեյրութ՝ թերթը ևս տանելով իր հետ: «Նայիրի»-ն Բեյրութում լույս է տեսնել որպես գրական-հասարակական շաբաթա-

թերթ: Ծառուկյանը «Նայիրի»-ն տպագրել է Սիմոն Սիմոնյանի «Սփյուռք» շաբաթաթերթի հարևանությամբ մրցելով կուսակցություններից ֆինանսավորվող պարբերականների հետ: Իր պատասխանատվությամբ և հավասարակշռված խոսքով Ծառուկյանը «Նայիրին» դարձրեց սփյուռքի ամենից շատ փնտրված թերթը: «Արդարեւ, իր հակառակորդներն անգամ կը փնտռէին թերթը ու կը կարդային: Կը շեշտեմ, կը կարդային, քանի որ այսօր ալ, սփյուռքի մէջ, դեռ շատ մը թերթեր, այո՝ ունին բազմաթիւ բաժանորդներ, բայց չունին բազմաթիւ ընթերցողներ... Այնինչ «Նայիրի»ն կը կարդացուէր ու այսօր ալ թերթին դադարումէն տարիներ ետք կը փնտռուի «Նայիրի»ն...» [5, 3]:

1946 թվականին խմբագրել է նաև «Արևելք» օրաթերթը: Եղել է «Հայ յեղափոխական դաշնակցութիւն» կուսակցության անդամ, որից հետագել է 1956 թվականին:

1960-ական թվականների կեսերին Ծառուկյանը քննադատության է ենթարկել անգլիական «Բրիտանիկա» հանրագիտարանը, որը «Արմենիա» խորագրով հոդվածը ուղեկցել էր վաչկատուն ինչ-որ մի ցեղի մարդկանց լուսանկարով՝ «Ժամանակակից հայեր» խորագրի ներքո<sup>5</sup>:

Պարզվում է՝ այդ առիթով Ծառուկյանին արձագանքել են նաև Հայաստանից: «Երեկոյան Երևան» թերթում ընդարձակ մի հոդված է տպագրել Ստեփան Կուրտիկյանը<sup>6</sup>: Բանասեր Գրիգոր Գոյումջյանը<sup>7</sup> գրում է, թե խմբագիրը անմիջապես հրատարակել է այն «Հայ չեն, քյուրտ են եղեր» խորագրի ներքո հոդվածի տակ նշելով իր տան հասցեն, և բացատրում է, թե ինչու «Ապահովության համար էր դա, մոռանալով ավագ խորհրդականի պաշտոնս, որովհետև այդ տարիներին դյուրին բան չէր աշխատակցել «Նայիրի»-ին, թեկուզև անձնական նամակով: Եվ չուշացավ արձագանքը՝ այստեղ, հայրենական հանդիմանության, սփյուռքից շնորհավորական նամակների տեսքով» [2, 5,8]:

---

<sup>5</sup> Հետագայում, իհարկե, պարզվում է իրողությունը. հատորը, որից «օգտվել» էին անգլիացիները, ֆրանսիական հնագույն մի հրատարակություն էր, որում հայերին գուգահեռ ներկայացված էին նաև Հայաստան ներխուժած վաչկատուն ցեղերը՝ բազմաթիվ լուսանկարներով: Բառահողվածը պատրաստողները ուղղակիորեն անտեսել էին նկարների ներքո եղած մակագրությունները:

<sup>6</sup> Ստեփան Միհրանի Կուրտիկյանը (1908-1986) հայ խորհրդային գրող է, արձակագիր, գրաքննադատ, հրապարակագիր, լրագրող: 1926-1928 թվականներին՝ Հունաստանի կոմկուսի անդամ: ԽՍՀՄ անդամ 1929 թվականից: ԽՍՀՄ գրողների միության անդամ է 1946 թվականից: 1975 թվականից ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ է, Հայրենական մեծ պատերազմի մասնակից [16, 118; 18]:

<sup>7</sup> Գրիգոր Պողոսի Գոյումջյանը (1937-2012) հայ աղբյուրագետ է, գրականագետ, վաստակավոր լրագրող, հասարակական գործիչ: Ծնվել է Հունաստանի Սալոնիկ քաղաքում: 1990-ական թվականներին աշխատել է ԵՊՀ ժառանգախոսիկայի ֆակուլտետում: Սփյուռքահայ մամուլի պատմության, ինչպես նաև հայրենակցական միությունների գործունեության մասնագետ էր: «Հայկական սովետական հանրագիտարանի» բազմաթիվ բառահողվածներ պատկանում են նրան: Գրիգոր Գոյումջյանը նաև «Սեբաստիա» հայրենակցական միության նախագահն էր, Հայաստանի դեմոկրատական կուսակցության հիմնադիր անդամ:

Սակայն աղավաղումների այս հանգամանքը, ըստ Գույումջյանի, ունեցել է նաև շարունակություն, որը նա արտացոլել է մինևույն հողվածում<sup>8</sup>: Չուգադիպու-թյամբ, այդ օրերին Երևանում է գտնվել նաև Անդրանիկ Շառուկյանը, և Գույում-ջյանը նամակը Գրիգոր Քեշիշյանի միջոցով փոխանցել է նրան: Բեյրութ վերա-դառնալուց հետո Անդրանիկ Շառուկյանը նամակը անմիջապես տպագրել է «Նայիրի»-ում՝ այն ուղեկցելով իտալահայ ազգայիններին ուղղված մի կոչով, որը հորդոր էր ներքին ուժերը գորաշարժի ենթարկելու՝ այդ ոտնձգություններին հակ-ընդդեմ հարվածելու նպատակով: Իտալահայ գաղութը կարողացել է միավորվել: Հավաքվել են Միլանի և Կոմոյի հայ ձեռնարկատերերը, հայթայթվել է անհրա-ժեշտ դրամագլուխը, հրավիրվել են հայ և իտալացի ճարտարապետներ, որոնք սկսել են ուսումնասիրել հայ ճարտարապետությունը գիտական մակարդակով:

Ըստ Գույումջյանի՝ ձեռք բերված արդյունքների մասին տեղյակ է քաղաքա-կիրք ողջ աշխարհը: Ալլազո Լովելոյի և նրա գործընկերների հրատարակած գրքերը հայ ճարտարապետության գլուխգործոցների մասին անցել են ձեռքից ձեռք, թարգմանվել են տարբեր լեզուներով [2, 5, 8]:

### Բանաստեղծը և արձակագիրը

1935 թվականին Անդրանիկ Շառուկյանը հրատարակել է «Մոխրաման» [8] պարսավագրական վիպակը, որում քննադատում էր Լևոն Շանթին և իր մյուս ուսուցիչներին:

1939 թվականին նա տպագրել է «Առագաստներ» [9] բանաստեղծությունների ժողովածուն, որի շնորհիվ Շառուկյանը ճանաչվեց իբրև բանաստեղծ: Այս առի-թով գրականագետ Վազգեն Գաբրիելյանը գրում է՝ «Բանաստեղծը դիմադրության կոչ է անում, բայց «բաց ծովերը» ընդհանրապես կյանքի խորհրդանիշն են և անորոշ, մինչդեռ նավը պետք է ափ հասնի, իսկ ափի խորհրդանիշը չկա» [1, 339]:

1957 թվականին Շառուկյանը հրատարակել է «Թուղթ առ Երևան» [10] պոեմը, որը ամենաշատ հրա-տարակված երկերից մեկն է: «Թուղթ առ Երևան» պոեմը նրան դասեց սփյուռքահայ առաջատար բա-նաստեղծների շարքում: Հակոբ Օշականի գնահատ-



<sup>8</sup> Նույն տեղում: Ըստ հողվածագրի՝ 1966 կամ 1967 թվականին իր աշխատավայր է այ-ցելել Հայաստանի ճարտարապետության գծով արվեստաբաններից մեկը՝ համալսարանա-կան դասընկերոջ ուղեկցությամբ՝ ներկայացնելով մի բողոքագիր, այս անգամ «Իտալական հանրագիտարանի» էջերում թույլ տրված աղավաղումների առնչությամբ, որոնց հեղինակն էր ակադեմիական պատմաճանաչ Չուբինաշվիլին: Իտալացիները վրաց այս մասնագետին էին պատվիրել գրել հայ ճարտարապետությանը նվիրված բաժինը, և նա, օգտվելով այդ հնարավորությունից, հակագիտական տեսակետներով ձգտել էր նստեցնել հայ ճարտա-րապետության տեղն ու դերը: Հայաստանյան արվեստաբանը համոզիչ փաստարկներով մերժել է վերջինիս «գիտական» վարկածները և խնդրել է իտալացիներից սրբագրել աղավա-ղումները:

մամբ՝ «իր սերունդին անդրանիկ երկը, քնարական կալվածին վրա, համահավասար «Նահանջը առանց երգի» վիպականին» [5, 3]: Անդրանիկ Ծառուկյան բանաստեղծին և արձակագրին առանձին գրքով անդրադարձել է նաև Թորոս Թորանյանը [6]:

Ընդհանրապես, Անդրանիկ Ծառուկյանի բանաստեղծություններում և արձակում արտացոլված են աշխարհասփյուռ հայության տագնապները, հույզերն ու ձգտումները, 1915 թվականի ցեղասպանության արդյունքում որբացած արևմտահայ սերունդների կյանքը, ինչպես նաև՝ վերաբերմունքը Խորհրդային Հայաստանի հանդեպ: Ցեղասպանության, աքսորի պատկերները, մանկության տարիները, որբության վերհուշերը և վերապրումները արտացոլում են ցեղասպանությանը հաջորդած կյանքը՝ գաղթականներ, որբանոցներում տեղ գտած մանուկներ, որոնց Ծառուկյանը պատկերել է «Մանկություն չունեցող մարդիկ» [7] և «Երագային Հալեպը» [11] ինքնակենսագրական վիպակներում:

Անդրանիկ Ծառուկյանի ինքնակենսագրական վեպերը անմիջապես ցեղասպանությունից հետո չեն գրվել, այլ տարիներ անց, քանի որ ժամանակ էր հարկավոր, որպեսզի վերքը սպիանար, արժևորվեին ու վերագնահատվեին դեպքերը: Ինքնակենսագրական պատում գրելու համար հեղինակը կարիք ուներ ժամանակագրորեն դեպքերից հեռանալու:

1952 թվականին տպագրվել է նրա «Մանկություն չունեցող մարդիկ» վիպակը, որը տեղ է գտել Զապել Եսայանի «Միլիտարի պարտեզները», Վահան Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա», ինչպես նաև Գուրգեն Մահարու, Ստեփան Զորյանի ինքնապատումների շարքում: Ծառուկյանը մեծ ճանաչում է գտել «Մանկություն չունեցող մարդիկ» վիպակով: Այն 1963 թվականին առաջին անգամ վերահրատարակվել է Երևանում, մեկ տարի անց՝ 1964 թվականին, Մոսկվայում թարգմանվել է ռուսերեն, իսկ 1977 թվականին Փարիզում՝ ֆրանսերեն:

1958 թվականին առաջին անգամ Ծառուկյանը այցելել է Խորհրդային Հայաստան, դիտել է երկիրը, հանդիպել ու զրուցել է մարդկանց հետ: Նրա ուղեգրական խոհերը տեղ են գտել «Հին երագներ, նոր ճամբաներ» [12] խորագրով գրքում, որը լույս է տեսել 1960 թվականին: Դեռ այն ժամանակ արդեն պարզ էր, որ Ծառուկյանը իր խորհրդածություններում (և ոչ միայն Ծառուկյանը) դեպքերի ընթացքը կանխել էր երեք տասնամյակով: Փաստ էր, որ արևմտահայ հասարակական միտքը անցյալում նույնպես 30 տարով առաջ է եղել և կայունությամբ պահպանվում էր նաև նոր շրջանում: Գիրքը արգելվածների շարքում էր այդ ժամանակահատվածում, որի մասին չէր կարելի բարձրաձայն դրական կարծիք հայտնել:

Այդ շրջանի մասին բանասեր Գրիգոր Գույումջյանը գրում է. «Թեև խրուշչովյան ազատամտության տարիներն էին [19, 56-57], ոչ, իհարկե, ներկայիս խրուշչովյան, սակայն ասպարեզի վրա տակավին տեղ ու տիրականություն էին անում 30-50-ական մտայն թվականների ասպետները, որոնցից մեկը՝ Հայաստանի գրողների միության ղեկավարը, ինչպես նաև պատասխանատու պաշտոններ վարած Հրաչյա Գրիգորյանը, որ ետպատերազմյան տարիներին մասնագիտացավ նաև

սփյուռքահայ գրականության բնագավառում, վարում էր «Սովետական Հայաստան» հանդեսի խմբագրապետի պաշտոնը: Եվ ահա, ահարկու գրադատի համբավ վայելող այս անձը, հայրենիք-սփյուռք փոխադարձ հարաբերությունների հաստատել ձգտող այս գիրքը դարձրեց հարձակման թիրախ՝ ետին նպատակներ վերագրելով հեղինակի անկեղծ հայրենասիրական դատողություններին կամ պոռթկումներին» [2, 5]:

«Սովետական Հայաստան» հանդեսի խմբագրության և արտասանմանյան երկրների հետ մշակութային կապի հայկական ընկերության աշխատակիցները խմբագրապետի այս վարքագիծը դարձրին կուսակցական ժողովի նյութ և դատապարտեցին խստորեն: Գրապատմական նշանակություն ունեցող այս միջադեպը ուսանելի շատ բան ունի իր մեջ:

Սփյուռքյան շրջանի իրադարձություններին քաջատեղյակ անձը միայն գիտե, որ զարմանալի ոչինչ չկար այս հարձակումների մեջ, որովհետև Ծառուկյանից ուղիղ 30 տարի առաջ, երբ Շահան Լաթալին լքեց ՀՅԴ կուսակցությունը և, իր համախոհների հետ «Արևմտահայ ազատագրության ուխտը»<sup>9</sup> հիմնադրելու նպատակով, ԱՄՆ-ից փոխադրվեց Եվրոպա, այդ շարժումը 1980-ական թվականներին ամենաշատ հարվածները ստացավ Հայաստանից: Սակայն Շահան Լաթալիի շարժումը մեծ ժողովրդականություն էր վայելում եվրոպահայ գաղութներում՝ Ֆրանսիայից մինչև Հունաստան և Բուլղարիա: Եվ երբ Շահան Լաթալին այդ շարժման սկզբնավորումից երեսուն տարի անց՝ 1960-ական թվականների սկզբին, այցելեց Հայաստան, արժանացավ դրական վերաբերմունքի:

1975 թվականին Լիբանանը քաղաքացիական պատերազմի մեջ էր, և Ծառուկյանը անհանգստանում էր, քանի որ շատ էր կապված այդ երկրին և արար ժողովրդին: Այդ պատճառով գրեց «Երազային Հալեպը» երկը:<sup>10</sup> Լիբանանյան քաղաքացիական պատերազմի պատճառով քիչ է խոսվել նաև Ծառուկյանի «Վերջին անմեղը» [13] վեպի առիթով:

Նշենք նաև, որ Անդրանիկ Ծառուկյանը «Ռուբեն Սևակ. սերը եղեռնին մեջ» [14] վեպի համար 1988 թվականին արժանացել է «*Ռուբեն Սևակի հիշատակի տուն*» հաստատության *մրցանակին*:

Անդրանիկ Ծառուկյանը ամուսնացել է հասուն տարիքում: Ունեցել է մեկ աղջիկ, որի անունը Լաիրի էր: Կինը՝ Սոնան, մտավորական էր:

### **Վերջին մեկնումը**

Բանասեր Թորոս Թորանյանը գրում է, թե 1980-90-ականների *վերջին մեկնողներից* էր նաև Անդրանիկ Ծառուկյանը, ով իբրև բանաստեղծ, արձակագիր և հրապարակագիր նվաճել էր սփյուռքահայ գրականության բարձրագույն աստի-

---

<sup>9</sup> Ծանոթ է նաև *մարտիոցական շարժում* անունով:

<sup>10</sup> Լիբանանի քաղաքացիական պատերազմը սկսվել է 1975 թվականին, երբ քաղաքացիական զինյալները դարձանակալել էին ավտորուսի վրա՝ սպանելով ինքնաթիռում գտնվող 27 պաղեստինցի ուղևորներին: Պատերազմի բարդությունները կապված էին Լիբանանի բաժանված քաղաքական կառուցվածքի հետ, որը բաժանում էր *շիա ու սուննի* մահմեդականներին և քրիստոնյաներին:

ճանները՝ «Անդրանիկին մեկնումովը հայրենիք-սփիւռք յարաբերութիւններու զինուորագրեալներէն պակսեցաւ մէկը, որուն ձայնը լսելի էր բողոք կողմերէն, մէկը որուն կարծիքը կուզէին թէ Միլանի ու Փարիզի, Հալէպի ու Նիւ Եորքի, թէ՛ Քանաւայի ու Արժանթինի, թէ՛ Պելրուրի ու Աւստրալիոյ մեր ազգային գործիչները» [5, 3]:

1983-88 թվականներին Ծառուկյանը մի քանի հոդվածներ գրեց, լրագրերում սկսեց հրատարակել իր անտիպներից: Նա երկարատև հիվանդությունից հետո 1989 թվականի մայիսի 20-ին մահացել է Փարիզում, 76 տարեկանում [5, 3]: Հուղարկավորությունն ու թաղման արարողությունները անցան նույն թվականի մայիս 26-ին Փարիզի Ս. Յովհաննես Մկրտիչ Մայր Տաճարում:

Նրա մարմինը թաղվել է Փարիզի Պեր-Լաշեզ գերեզմանատան ֆրանսահայ Հ.Բ.Ը.Մ. Մտավորականների պանթեոնում, որի սկիզբը 14-րդ դարավերջին դրել է Կիլիկիայի վերջին արքան Լևոն Զ-ն<sup>11</sup>, ապա շարունակել են Գրիգոր Օտյանը և վերջին հարյուրամյակում ստեղծագործած հայ մշակույթի, գիտության ու գրականության ներկայացուցիչները՝ Արշակ Չոպանյանը, Հակոբ Գյուրջյանը, Ջաքար Ջաքարյանը, Էդգար Շահինը, Երվանդ Տեր-Մանվելյանը, Ջատիկ Խանգաղյանը, Շահան Շահնուրը, Նշան Պեշիկթաշլյանը, Նիկողոս Մարաֆյանը, Հրաչ Զարդարյանը, Հարութ Կոստանդյանը, Բյուզանդ Թովալյանը, Ջարեհ Որբունին, Ահարոն Տատուրյանը: Այստեղ էին ամփոփված նաև բոլոր ժամանակների մեծագույն հայեր Կոմիտասի և գորավար Անդրանիկ Օզանյանի աճյունները: Անդրանիկ Ծառուկյանը գիտեր այդ ամենի մասին և գիտեր, թե որտեղ է հաստատվում:

### **«Թուրթ առ Երեւան» պոեմը**

«Թուրթ առ Երեւան» չափածո նամակը, այլ բնութագրումով՝ *նգեշունչ պոեմը*, գրվել է 1944 թվականին, սակայն հասցեատիրոջը՝ հայրենաբնակ հայությանն է հասել 48 տարի ուշացումով: Օգտվելով, սակայն, ազգային-ազատագրական «անկախ» շարժումներից, Երևանում մի քանի անգամ վերահրատարակվել է «Թուրթ առ Երեւան» պոեմը<sup>12</sup> (նաև՝ հետմահու): Հարկ է նշել, որ այս պոեմը ունի տպագրության նախապատմություն:

1944 թվականի դեկտեմբերին տպագրելու նպատակով ուղարկվել է Խորհրդային Հայաստան հետևյալ մակագրությամբ՝ «Արտատպումները – նույնիսկ եւ մանավանդ մանակի արգելված են բոլոր երկրներու համար, բացի Խորհրդային



<sup>11</sup> Լևոն Զ-ն թաղվել է Քրիստինյանց վանքում: Լևոն Զ-ի տապանաքարը Ֆրանսիական հեղափոխությունից հետո 1794 թվականին փոխադրվել է Սեն Դենի վանական համալիր, ուր գտնվում է ֆրանսիացիների արքայական դամբարանը: Տապանաքարն այնտեղ է նաև այժմ:

<sup>12</sup> Պոեմը հայտնի է նաև «Հէ՛յ ջան, Երեւան» վերնագրով:

Հայաստանեն»:<sup>13</sup> Սակայն երկաթե վարագույրի հետևում «բարգավաճող» հայրենիքում չի տպագրվել պոեմը: Հետագայում սփյուռքի տարբեր գաղթօջախներում պոեմը ունեցել է բազմաթիվ հրատարակություններ, քանի որ արտահայտում էր արտասահմանում բնակվող սփյուռքահայ զանգվածների տրամադրությունները<sup>14</sup>:

Պոեմը գրվել է Գևորգ Աբովի «Մենք չենք մոռացել» [15] ոտանավորի առիթով, որում հեղինակը դաշնակցականներին շուն բնորոշմանն էր արժանացրել: Այս հանգամանքը սովորական երևույթ էր այդ տարիների համար. գաղափարական բանավեճի փոխարեն՝ հայհոյանք:

Պոեմը պատասխան է Սփյուռքի ազգային կուսակցությունների և Խորհրդային Հայաստանի փոխհարաբերություններում բազում կնճռոտ հարցերի: Հարցեր, որոնց մեծ մասը մինչ այժմ էլ իրենց լուծումը չեն գտել: Այդ առիթով գրող, բանաստեղծ ու հրապարակախոս Վահագն Դավթյանը մեկնաբանում է՝ «Երևի սա աշխարհի այն եզակի նամակներից է, որ այդքան ուշացումով է հասնում հասցեատիրոջը: Լինում են, իհարկե, նամակներ, որ ճանապարհին կորչում ու առհասարակ տեղ չեն հասնում: Բայց սա անկորնչելի նամակ էր, այնպիսի նամակ, որ վաղ թե ուշ պիտի հասներ հասցեատիրոջն ու երբ էլ հասներ, ուշացած ու հնացած չպիտի լիներ: Սփյուռքահայ նշանավոր բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս Անդրանիկ Օտուկյանն է այդ չափածո նամակի, այդ ոգեշունչ պոեմի հեղինակը» [4, 8]:

Պոեմը հասցեագրված է դպրոցահասակ պատանիներին, ուսանողությանը, ուսուցիչներին: Պեսոք է խոստովանել, որ պոեմում առկա է Օտուկյան- հրապարակախոսի շիկացած շնչառությունը՝ չարենցյան ոգով (կամ չարենցավարի), և այդ շիկացած հրապարակախոսությունը, ըստ Վահագն Դավթյանի՝ հեղինակը կարողացել է վերածել պոեմի: Օտուկյանի հրապարակախոսությունը ոչ միայն մտքի, այլև զգացմունքի ծնունդ էր, հետևաբար՝ վարակիչ էր, իսկ վարակելու գաղտնիքը զգացմունքի մենաշնորհն է: Պոեմը գրված է արևելահայերեն, ինչպես Վահագն Դավթյանն է գրում, «հավանաբար այն մտահոգությամբ, որ Աբովներն ու նրա նմանները լավ հասկանան» [4, 8]<sup>15</sup>:

Գևորգ Աբովին ուղղված դառը խոսքերը հայ ազատագրական շարժումների,

---

<sup>13</sup> Հավանաբար, Ա. Օտուկյանը փորձել է շոյել Խորհրդային Հայաստանի «ինքնապիրությունը», սակայն պեսոք է խոստովանել անիմաստ:

<sup>14</sup> «Թուրջ առ Երեւան» պոեմը հեղինակի կենդանության օրոք ունեցել է մոտ 20 հրատարակություն, որը աննախադեպ երևույթ էր թե՛ սփյուռքում, և թե՛ հայ գրականության մեջ ընդհանրապես:

<sup>15</sup> Նույն տեղում: Պոեմում խորը ակնածանք կա Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության հիմնադիրներ Քրիստափոր Միքայելյանի, Միմոն Զավարյանի, Ռոստոմի նկատմամբ: Օտուկյանը սփյուռքի նշանավոր այն գործիչներից էր, ով անհատի պաշտամունքի դատապարտումից անմիջապես հետո այցելեց Հայաստան և գրեց՝ «Հին երազներ, նոր ճամփաներ» գիրքը: Անհատի պաշտամունքը թեև դատապարտվել էր, բայց գործում էին դեռևս այդ հոգեբանությամբ ու մտածողությամբ կաղապարված մարդիկ, որոնց համար Օտուկյանի գիրքը «թշամական դիրքերից» էր գրված:

հայ հերոսական ոգու փառաբանության, Խորհրդային Հայաստանի նկատմամբ տաճած սիրո համատեքստում են: Պոեմը միաժամանակ ցավի, հպարտության ու կարոտի բռնկում է, ու թեև հրապարակախոսական շունչ ունի, սակայն խիստ շիկացման շնորհիվ փոխարկվել է բանաստեղծության: Իսկ Շառուկյանի այքը ընդունակ էր տեսնելու երևույթների էությունը ու խորքը: Վահագն Դավթյանը գրում է. «Անդրանիկ Շառուկյանը մինչև վերջ մնաց իբրև կասկածելի վստահելի, նույնիսկ վտանգավոր անձնավորություն: Եվ պատահական չէր, որ Հայրենիք կատարած մի հերթական այցելությունից հետո Հայաստանում նրան առնձնահատուկ կերպով վերաբերվել էին» [4, 8]:

Շառուկյանը խորապես հասկանում էր, որ քաղաքական պորտաբույծներն ու Հայաստանը տարբեր են, և նրանց վերաբերմունքի դեմ դնում էր իր հարգանքը և գնահատանքը, իրեն շրջապատում էր մտավորականության ներկայացուցիչներով, որոնք միաժամանակ լավագույն ընթերցողներն էին, իսկ քաղաքական պորտաբույծներին շարունակում էր նայել արհամարհանքով: Այդ տարիներին Խորհրդային Հայաստանի հողին դեռևս ոտք չդրած, բայց հայրենասիրությամբ տարված բանաստեղծը չէր կարող տեսնել երկրի իրականության մթին ծալքերը, քանի որ նրան ու աշխարհին հայտնի չէին երկաթե վարագույրի հետևում *ստալինյան բռնաճնշումների ու ոճրագործությունների* խնամքով թաքցրած ծավալներն ու չափերը: Հեղինակի հիացական ու լավատեսական վրիպումները բացատրելի են դրանով:

Պոեմում *Հայ Հեղափոխական Դաշնակցության* մղած «ազգային ազատագրական» պայքարի, նրա դեմքերի գնահատումն ու փառաբանությունն է: Մեր գնահատությամբ՝ հայրենասիրական այդ պաթոսախառը տարերքը, որ համակում է ընթերցողին ու տանում է իր հետ, բնագոյային և զգացմունքային մակարդակներում է, և որևէ աղերս չունի սթափ մտքի, գնահատության և դատողականության հետ: Մթափ միտքն ու գնահատությունը դրսևորվեցին այնուհետ:

### **Եզրակացություն**

Անդրանիկ Շառուկյանի գրականությունը, արձակը, հրապարակագրությունը մեծ արձագանք են գտել Խորհրդային Հայաստանում և հայկական սփյուռքի տարբեր գաղթօջախներում, հատկապես՝ միջինարևելյան հատվածում: Նրա վիպակները հարուստ նյութ են Արևելքի մասին, մասնավորաբար, Հալեպի և Բեյրութի դառնալով տվյալ ժամանակների կարևոր հուշապատումներ:

Երկուստեք կարևոր նշանակություն ներկայացնելով հեղինակի և ընթերցողի համար՝ նրա ինքնակենսագրական վեպերը ամփոփում են Հայոց ցեղասպանության հետևանքների պատկերման հավաստի աղբյուրներ և հարուստ նյութ են պարունակում գրական, պատմական և հոգեբանական տարաբնույթ ուսումնասիրությունների համար:

Անդրանիկ Շառուկյանը նաև 20-րդ դարակազմի հայոց ցեղասպանության թեմայի գեղարվեստականացմանը իր նպաստը բերած հեղինակներից է: Նա չի սահմանափակվել սոսկ ցեղասպանությունից փրկվածների ու նրանց ժառանգների ճակատագրերի ուղղակի արձանագրություններով ու վավերագրություններով, այլ գեղագիտական արժեքավոր հղումներով բացահայտել է 20-րդ դա-

րասկզբի մեծագույն չարիքը՝ հայոց ցեղասպանությունը: Մա համամարդկային ողբերգություն է, և Օսմանյան կայսրությունում կատարված հայերի ցեղասպանության թեմային անդրադարձել են ոչ միայն սփյուռքահայ (հայագիր և օտարագիր) և խորհրդահայ գրողները և գրականագետները, այլև օտարագրի հեղինակները:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.2-69>

### Գրականություն

1. Գաբրիելյան Վ., Սփյուռքահայ գրականություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, 426 էջ:
2. Գույումճյան Գր., Այնքան կյանքոտ, այնքան բեղուն, Հայրենիքի ձայն, Երևան, 1989, էջ 5, 8:
3. Դանիելեան Ժ., Սփիւռքահայ նոր պարբերական մամուլը 1967-1980 թթ., Հայկազեան հայագիտական հանդես, 1981, հ. Թ, Հրատարակութիւն Հայկազեան գոլէճի հայագիտական ամբիոնի, Պէյրուք, տպ. Atlas, էջ 253-294:
4. Դավթյան Վ., Շատ ուշացումով, բայց և ժամանակին (Վահագն Դավթյանի անտիպ հոդվածը), Հայկական մոլորակ, Երևան, 1997, 28 հունվարի, էջ 8:
5. Թորանեան Թ., Ծառուկյանն ալ մեկնեցաւ, Զարթօնք, Բէյրուք, 16 հուլիսի, 1989, էջ 3-4:
6. Թորանյան Թ., Անդրանիկ Ծառուկյան, արձակագիրն ու բանաստեղծը, Լոս Անճելըս, 2000, 215 էջ:
7. Ծառուկյան Ա., Մանկություն չունեցող մարդիկ: Երագային Հալեպը (Վիպակներ), Երևան, Սովետ. գրող հրատ., 1985, 304 էջ:
8. Ծառուկյան Ա., Սոխրաման, Պէյրուք, 1935, 62 էջ:
9. Ծառուկյան Ա., Առագաստներ, Հալեպ, 1939, 80 էջ:
10. Ծառուկյան Ա., Թուղթ առ Երևան, Պէյրուք, տպ. Էտվան (8-րդ տպ.), 1957, 50 էջ:
11. Ծառուկյան Ա., Երագային Հալեպը, Պէյրուք, 1996, Շիրակ հրատ., 204 էջ:
12. Ծառուկյան Ա., Հին երգեր, նոր ճամփաներ, Պէյրուք, 1982, 334 էջ:
13. Ծառուկյան Ա., Վերջին Անմեղը, Պէյրուք, 1980, Կ Տօնիկեան և որդիք հրատ., 311 էջ:
14. Ծառուկյան Ա., Սէրը եղեռնին մէջ, Ե., 2004, Գրաբեր, 236 էջ:
15. Կարմիր մարտիկի գրադարան, 1944, թիվ 7, Հայպետհրատ:
16. Հայկական սովետական հանրագիտարան, խմբ. Վ. Համբարձումյան, Կ. Խուղավերդյան, 1974, հ. 5, էջ 118:
17. Հայկազեան հայագիտական հանդես, 1981, հ. Թ, Հայկազեան գոլէճի հայագիտական ամբիոնի հրատ., Պէյրուք, տպ. Atlas, էջ 253-294:
18. Հայկական համառոտ հանրագիտարան հրատ., 1990. հ. 3:
19. Համբարձումյան Ն., Մարո Մարգարյանի քնարերգությունը, Երևան, 2003, 140 էջ:

## Биография Андраника Царукяна в контексте поэзии и публичности

Наира Амбарцумян

### Резюме

**Ключевые слова:** Андраник Царукян, армянская литература Диаспоры, поэт, прозаик, издание, стихотворение «Письмо в Ереван»

В исследовании представлена биография диаспорального армянского писателя Андраника Царукяна, которая была рассмотрена в контексте исследования литературно-культурных реалий и фактов, связанных с биографией писателя. Исследование включает в себя психологические, этические и социально-политические аспекты. Приводятся ключи, связанные с развитием литературной и общественной деятельности автора. Есть также ссылки на дебаты. Параллельно был рассмотрен также первый визит Андраника Царукяна в Ереван, в котором подытожен анализ отношений между Советской Арменией и автором армянской диаспоры. Андраник Царукян впервые посетил Советскую Армению в 1956 году. Его впечатления от частых поездок в Советскую Армению нашли отражение в его книгах «Старые мечты, новые пути» (1958) и «Новая Армения, Новые армяне» (1983). В 1988 году был удостоен премии имени Рубена Севака за роман «Любовь в геноциде». Умер 23 мая 1989 года в Париже. Биография Андраника Царукяна рассматривается также с исторической, политической, социальной и общественной точки зрения, завершая морально-психологический анализ автора. Исследуя многоплановую литературную деятельность Царукяна, делается также попытка выделить особенности личности автора.

## Andranik Tsarukyan's Biography in the Context of Poetry and Publicity

Naira Hambardzumyan

### Summary

**Key words:** Andranik Tsarukyan, Armenian literature of the Diaspora, poet, novelist, publication, "Paper to Yerevan" poem

The study presents the biography of the Armenian writer of Diaspora Andranik Tsarukyan, which was examined in the context of the study of literary and cultural realities and facts related to the biography of the writer. The study includes psychological, ethical and socio-political aspects. Keys related to the development of the author's literary and social activities are provided. There are also links to debates. In addition, Andranik Tsarukyan's first visit to Yerevan was also reviewed. The latter summarized the analysis of the relations between Soviet Armenia and the Armenian writer of the Diaspora. Andranik Tsarukyan first visited Soviet Armenia in 1956. His impressions from frequent trips to Soviet Armenia were reflected in his books "Old Dreams, New Paths" (1958) and "New Armenia, New Armenians" (1983). In 1988, he was awarded the Ruben Sevak Prize for his novel "Love in Genocide". He died on May 23, 1989 in Paris. Andranik Tsarukyan's biography is also examined from a historical, political, social standpoints, completing the moral and psychological analysis of the author. While exploring Tsarukyan's multifaceted literary activity, an attempt is also made to highlight the author's personality features.

Ներկայացվել է 06.07.2024 թ.

Գրախոսվել է 12.09.2024 թ.

Ընդունվել է տպագրության 28.11.2024 թ.